

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԼԵԶՈՒԻ ՊԱՏԿԵՐԸ.ԻՈՐՈՒԹԵԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բան ոչ է բարբառ լեզուոյն, այլ՝ խոկումն մտացն:
ՆԵՐՍԵՅ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Բ. Պատկերը Նարեկացու Ստեղծագործութեան մէջ

Անմահութեան բաղձանքը յատուել է մարդուն: Բանաստեղծներին՝ առաւել եւս: Նարեկացին սրափ գիտակցել է ոչ միայն իր ստեղծագործութեան համամարդկային արժեքը, այլ եւս իր անմահութիւնը տեսել է նրա յարատեւութեան մէջ: Նա կանխատեսել է, որ իր Մատեանը պատմուելու է ազգերին, բարողուելու է ժողովուրդներին, դրոշմուելու է մարդկային իմացութեան դռների վրայ և տպաւորուելու է զգայութեան սեմերին՝ մարդուն ցոյց տալու համար բարոյական վերափոխման և ինքնակատարելագործման ուղին, իսկ ինքը թէւ որպէս մահկանացու պիտի վախճանուի, սակայն իր մատեանի յարակայութեամբ պիտի մնայ յաւերժ անմահ: Համամարդկային այս գաղափարը արտայայտել են տարբեր դարաշրջանների բանաստեղծներ: Հետաքրքիր է նոյն գաղափարի գեղարուեստական մարմնաւրման պատկերների իւրայատկութիւնը դարերի հոլովոյքում: Բնահիւսական շրջանի եւ գրաւոր դպրութեան սահմանագծի արտայայտութիւն է Յոր երանելու իդը. «Ո՛ տայր ինձ գրել գրանս իմ, եւ հանել զնոսա ի մատեան յաւիտեան, գրչաւ երկարեաւ ի կապարի կամ ի վէմս բանդակեալ (Յոր, ԺԹ, 23-24): Յորին

մտահոգում է բանաւոր խօսքի կարբատել կեանքը: Գիրը յաւերժացնում է խօսքը: Նա ցանկանում է, որ իմաստուն խօսքը հասնի սերունդներին՝ իրեպ մատեան, իրեւ փորագրուած յուշարձան:

Հորացիոսը, սակայն, արդէն գիտակցում է, որ բանաստեղծի ստեղծագործութիւնը նրա յիշատակի կորողն է:(3) Բանաստեղծն ինքն է կանգնեցնում իր անձեռակերտ յուշարձանը: Նա վստահ է, որ իր յուշարձանն աւելի երկար է կանգուն մնալու մարդկային յուշաշխարհում, քան պղնձակերտ կորողները պատուանդանների վրայ: Հորացիոսի այս բանաստեղծական պատկերը համահնչիւն է անտիկ գեղարուեստական մտածողութեանը:

Ծեյխսպիրը մի շարք սոնետներ է նուիրել մահուան ու անմահութեան թեմային (55րդ, 65րդ, 74րդ և այլն): Մահուանը կարելի է յաղքահարել ոչ միայն սերունդ թողնելով՝ անմահանայով ժառանգների մէջ, այլև ստեղծագործութեամբ: Հատ Ծեյխսպիրի՝ արուեստը ոչ միայն ժամանակի յուշարձանն է, այլև հեղինակի անմահութեան: Բանաստեղծը յարատեւում է իր բողած տողերի մէջ: Եւ ոչ միայն բանաստեղծը՝ այլև բարեկամը,

որին ճօնուած են իր երգերը: Այս միտքն արտայայտուած է մասնաւորապէս նրա 55րդ սոնետում:(4)

Նոր ժամանակների բանաստեղծներից նոյն նիւթին են նուիրուած Ալեքսանդր Պուշկինի «Յուշարձան» բանաստեղծութիւնը: Չեւական տեսակէտից Պուշկինն արձագանգում է Հորացիոսին: Մինչդեռ գաղափարական տեսակէտից նրանք գեղարուեստական մուածութեան տարբեր դարաշրջանների ներկայացուցիչներ են: Հորացիոսի բանաստեղծութեան ծանրութեան կենորոնը կազմում է այն միտքը, որ մահկանացու էակը ստեղծագործման իր աշխատանկով ներմարմնաւորուում է իր վաստակի մէջ եւ անմահութիւն ու փառք է նուանում դարերում: Պուշկինի մօտ գաղափարական ծանրութեան կենորոնը փոխանցում է բանաստեղծի դերին, ժողովուրդի, մարդկութեան համար նրա ստեղծագործութեան ունեցած նշանակութեան ընդգծմանը: Իրեւ բանաստեղծ՝ նա հաւատարիմ է մնացել ազատութեան, հումանիզմի, գեղեցիկի իդեալներին, ուստի ինքը եւս պիտի յիշուի դարերում՝ իր անձեռակերտ յուշարձանով: (5)

Նարեկացին եւս իր ստեղծագործութիւնը պատկերացնում է որպէս յուշարձան: Բայց Նարեկացու գեղարուեստական պատկերն էապէս տարբերուում է մի կողմից թիրիխական Յորի եւ անտիկ Հորացիոսի, միւս կողմից՝ Վերածնութեան դարաշրջանի եւ նոր ժամանակների բանաստեղծների գեղարուեստական պատկերներից: Նարեկացին իր Մատեանը կուակում է մարդկութեանը եւ Աստծուն: Նա պաղատում է Աստծուն, որ սրտի ողբերից հիւսուած իր Մատեանը մշտապէս լինի նրա առջև, յարատել ինչի նրա ականջին՝ արդարների բերանով, սրբութեան սրահում ընծայուի նրան, ինկարկուի նրա անուան տանարում,

բուրմունիք տարածի նրա փառքի սեղանին, պահուի նրա գանձարանի մէջ՝ ամբարուած նրա ունեցուածքի հետ.

*Կացէ՛ առաջի Ի՞ մշտմցենաւոր,
Եւ յիշատակեսցի՝ ի լսելիսդ Ի՞ ունեցազ.*

*Բարբառեսցի՝ շրբամբ ընտրելոց
Ի՞ իւաւսեսցի՝ բերանով ի հրեշտակաց Ի՞ ունեցազ.*

*Տարածեսցի՝ հանդէպ արոռոյ Ի՞ ունեցազ,
Եւ ընծայեսցի՝ ի սրահ սրբութեան
Ի՞ ունեցազ.*

*Խնկեսցի՝ ի տաճար անուան Ի՞ ունեցազ,
Եւ բուրեսցի՝ ի սեղան փառաց
Ի՞ ունեցազ.*

*Պահեսցի՝ ի գանձարանի Ի՞ ունեցազ,
Եւ համբարեսցի՝ ի ստացուածս
Ի՞ ունեցազ:*

(Բան ԶԲ, թ)

Իր անմահութեան ժամկետը նարեկացին չի գծում մարդկային մտքին հասանելի դարերի տեսողութեամբ եւ սերունդների յիշողութեամբ: Նրա համար կայ աստուածային անիմանալի յաւիտենութիւնը: Այդ յաւիտենութիւնն է նրա հոգու յաւերժութեան չափանիշը.

*Իսկ ինձ եղիցի պատգամս այս
բանի*

*Արձան փորագրեալ ամենեւին
անեղծանելի:*

*Որ փոխանակ իմոյ եղկելոյս անձին
մահացուի:*

*Անդադար հնչմամբ հեծութեան
լալոյ*

*Առանց լոելոյ միշտ աղաղակէ:
Լիցի՛ եւ ոսկերացս բակտեցելոց*

*ի հողապատեան շիրիմ վերարկուին
Անմոռունչ ձայնիւ զայս խոստովանել,*

*Հասցէ՛ եւ մարմնոյս ի հող լուծելոյ
Բարբառով իմն անազելեաւ*

ծածկատեսիդ զոյն պաղատիլ:

(Բան ԿԶ, ա)

Այսպիսով, Գրիգոր Նարեկացու գեղարուեստական պատկերների համակարգը օրինաչափորեն ներդաշնակում է նրա դարաշրջանի գեղարուեստական մտածողութեանը, քրիստոնէական հումանիզմի նրա իդեալին եւ գրականութեան աշխարհականացման միտումներին: Տրոհելի պատկերների իր անտրոհելի միասնութեան մէջ գեղարուեստական հոյակերտ պատկեր է Մատեանը՝ ամբողջութեամբ վեցրած: Առանձին պատկերների մասնակի վերլուծութիւնը երբեմն խաթառում է երկի ամբողջական ընկալմանը: Ես փորձեցի ընդհանուր գծերով ցոյց տալ Մատեանի պատկերային համակարգի իւրայատկութիւնը: Մատեանի իւրաքանչիւր գլուխ կարելի է դիտել իրբեւ առանձին պատկեր՝ իր մասերի եւ ամբողջութեան փակ շրջագծի մէջ: Եւ այդուհանդերձ, նրանց սերտօրեն շաղկապուած են իրար թէ ընդհանուր գաղափարով եւ թէ հնարական հերոսի գգացմունքների միասնութեամբ: Ահա թէ ինչու տեղին է թւում վկայակոչել ուսւ մեծ գրող Լև Տոլստոյի ուսանելի մի դիտողութիւնը, որ լոյս է սփռում նաև Մատեանի պատկերային հիւսուածքի առանձնայատկութեան վրայ: «Արուեստի երկի համար ամենից կարեւորն է, որպէս զի նա կիզակետի նման ինչ-որ մի բան

ունենայ, այսինքն՝ այնպիսի մի բան, որի մէջ միաւորուեն կամ որից ելնեն բոլոր նառագայքները: Եւ այդ կիզակետն էլ անմատչելի պէտք է լինի բառերով լիովին բացատրելու համար: Արուեստի լաւ երկը հեց նրանով է կարեւոր, որ նրա հիմնական բովանդակութիւնը, իր ողջ լրիւութեամբ, կարող է արտայայտուած լինել միայն իրենով»: (6)

ԱՊՐԻԼԻՆԵՐ ԵՒ ՄԱՆՅՈՒԱԿՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ. Պատկերը Նարեկացու Խոնդագործութեամբ Մ. Շ.

3. Գորապս. Օды, էուզու, սամոր, ուժանա, Մ.. 1970. ս. 176.

4. Ահա Ծյյուպիրի այդ տողերը. Արբաների հոյակերտ դամբաները մարմարայ իմ այս հզօր երգերից աւելի շատ չեն ապրի, Քո պատկերը նրանց մէջ աւելի վառ կը շողայ, Քան դարերի փոշու մէջ՝ շիրմախարի զրերի: (55րդ սոնետից: Վ. Ծյյուպիր, Սոնետներ, բարգ. Գ. Գալուստյան, Յովիկ, Քերշոն, Երևան, 1961, էջ 71.)

5. Ահա և Պուշկինի տողերը.

Օ ոչ- և չեմ մեռնի - հոգիս նուիրական երգով իմ անհինից երկար կ'ապրի և կը մնայ անօդ, Եւ կը լինեմ ևս փառապան, որման լուսնի նոր լու Կապրի թեկուզ մի բանաստեղծ:

(Ա. Ա. Պուշկին, Երկեր, հ. 1, Երևան, 1956, էջ 402, բարգմ. Ն. Զարեանի):

6. A. O. Գոլդենվեյզը. Ելուսւ Տոլստոյ, Մ.. 1959. ս. 68.

(Եարունակելի)

Ա. ՊԱԶՈՒՆԵՐ